



126. ԽՈՐԹ ՄՈՐ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մի մարդ, մի կնիկ են ըլում: Դրանց մի ախշիկ, մի տղա են ունենում: Էտ մարդը որնչպար մարդ ա ըլում: Տարեկան ցանրմ են, վարըմ են, ապըըմ են: Յրերից մի օր դալիս ա էտ մարդի կնիկը հիվանդանում ա: Իշկան բժիշկ ա բերըմ, շի կարա լավացնի: Շատ մնալուց ետ, մարդի կնիկը մեռնում ա: Տարավ էտ մարդը կնկան թաղեց, սկսեց էտ մարդը մտածմունքի մեջ ընկնել. «էհ,— ասեց,— ի՞նչ անեմ, թե էթամ,— ասեց,— մի ուրիշ կնիկ բերեմ, վալ թե էս իմ էրեխեքին լավ չպահի,— ասեց,— ի՞նչ անեմ, երեխեքիս պահող չկա, պտի բերեմ»: Էս մարդը վեկացավ գնաց կնկա մանդալու, մի տեղից մի կնիկ առավ բերեց, համա էտ կնկա հետ էլ մի ախշիկ կար, հետը բերեց: Ըսկսեցին իրար հետ ապրիլը:

Մի քանի վախտ անցկենալուց եդը կնիկը ասեց. «էս մարդը էտ էրեխեքին շատ լավ ա պահում, ես ո՞նց անեմ, որ էրեխեքանց դրա աչքից քցեմ,— ասեց,— Յավա՛շ, ես մի օյին կը հանեմ դրանց գլուխը»: Էկավ աշնան ցանքի վախտը: Բերեց մարդից, էրեխեքանցից թաքուն իրանց սերմի ցորենը էփեց, էկավ մարդը վեկալավ տարավ էտ սերմը ցանեց: Էկավ տարին լրացավ, խալխի ցորենը կանաչեց, բայց էտ մարդի ցորենը չկանաչեց:

Ասեց.— Ա՛յ կնիկ, խալխի արտը կանաչել ա, բա մերը խի՞ չի կանաչել:

— է՛հ, ես ինչ գիդամ, ա՛յ մարդ, խի՞ չի կանաչե:

էկավ էն մյուս տարին, էտ կնիկը նորից էտ սերմացուն էփեց, էտ տարի էլ մարթը տարավ ցանեց: էլի խալխի արտերն էլան, էտ մարդի արտը չէլավ:— Ա՛յ կնիկ,— ասեց,— բա էս ի՞նչ բան ա, էս տարի էլ չէլավ մեր արտը:

Ասեց.— Ա՛յ մարդ, հալբաթ մի բան կա, որ մեր արտը չի ըլում:

— է՛,— ասեց,— ես ի՞նչ գիդամ, ինչ կա:

Ասեց.— Յավա՛շ, ես էթամ մի գրբացի մոտը տենանք ի՞նչ ա ասըմ:

Վեկացավ գնաց մի հարևանի տուն, բայց գրբացի կուշտ չգնաց: էկավ, ասեց.— Ա՛յ մարթ, գրբացը մի բան ա ասըմ, համա ասելու չի, ի՞նչ ասեմ, ասըմ ա՛ ըու մարթի էրեխեքը արտը ցանելու վախտը, տղին պտի գլխին մորթի, ախչկանը՝ ոռքին:

— է՛հ,— ասեց,— ա՛յ կնիկ, քանց թե սոված բոլորս պտի մեռնենք, լավն էն ա՛ տանենք էտ էրկու երեխուն մատաղ անենք,— ասեց,— առավոտը որ ես կըվերնեմ սերմը կը տանեմ, դու խաշիլ կէփես, դանակը կը քցես խաշիլի մեջը, կը տաս իմ էրկու էրեխին բերեն, էն վախտը ես կը մորթեմ ըտրանց:

Առավոտը մարգը սերմը վեկալավ, գնաց: Տարավ արտը ցորենը ցանեց, բայց էտ տարին կնիկը ցորենը չէր խաշե:

Առավոտը խաշիլ էփեց էտ կնիկը, տվեց երեխեքանց, վեկալան, գնացին: Ճամփի կիսին մի ծիտ թռավ, էկավ դրանց առաջը, ասեց.— Մի քիչ խաշիլ տվեք, մի բան ասեմ:

Քիրն ասեց.— Դե կորի՛, ֆողեմ գլուխդ, տանըմ եմ հորս:

Ախպերն ասեց.— Տո՛ւր, տենանք՝ ի՞նչ ա ասըմ, ա՛յ քիր:

Մի թիթա քցեցին ծտին, կերավ, ասեց.— էտ խաշիլը որ տանըմ եք, դրա մեջը մի դանակ կա, ձեր հերը էտ դանակով ձեզ պտի մորթի, խաշիլը կերեք, հանեք միջից, էտ ձեր խորթ մերն ա արե: Խաշիլը կերան, տեհան որ դանակը միջին ա:

— է՛,— ասեց տղեն,— էթանք տենանք մեր ափուն արտն ա, թե չէ:

Գնացին արտը, տեհան, որ հերը փետը տնգել ա, փափախը դրել ա փետի գլխին, շուխեն էլ քցել ա վրեն, ինքը գնացել ա:

— է՛,— ասեց,— բա ո՞ւր ա մեր հերը, աստված,— ասեց,— յարաբ ո՞ւր ա գնացել մեր հերը: Հալբաթ,— ասին,— որ մեր մերը դանակը քցել էր խաշիլի մեջ, որ մեզ մորթի, մեր հերն էլ թողել ա, գլուխը առել ա, գնացել:

— Բա մենք ո՞ւր էթանք,— ասեց տղեն,— մենք հո տուն չենք
լթա: Մենք էլ գլխներս առնենք մի դճով էթանք:

Ըտեհան վեկացան քիր ու ախպեր գնացին: Չգիտեին, թե ո՞ւր
էին լթում. աստված գիգար: Շատ գնացին, թե՛ քիչ, ախպերը ճամ-
փին ծարավեց, ասեց.— Մարավ եմ, ա՛յ քիր:

— է,— ասեց,— ինչ անեմ, ո՞նչ ջուր կա, ո՞նչ դատ:

Անձրև էք էկե էտ օրը՝ ճամփին տավարի, ոչխարի ոտատեղեր
կար:

Ասեց.— էս ջրիցը խմե՛մ:

— Չէ՛,— ասեց,— մի խմի,— ասեց,— որ տավարի ոտի տե-
ղից խմես՝ ոչխար կըլես:

Շատ որ ախպերը ծարավեց, քվորից թաքուն ետ ընկավ. ոչ-
խարի ոտի տեղի ջուրը խմեց: Ախպերը գառավ մի հատ սպիտակ
գառ: Քիրը թամաշա արեց տեհավ, որ ախպերը դառ ա դառե:—
է՛հ,— ասեց,— փառք քեզ աստված, բալքի բարին էս ա:

Շատ գնացին, թե՛ քիչ, հասան մի քաղաքի կուշտ. էտ քաղա-
քի դրադր մի հատ հավուզ կար, ախպերը էտ ծառի տակ արածեց,
ինքն էլ նիւսվ, ծառի վրա նստեց: Առավոտը թաքավորի մեհտար-
ները գալիս են ձիանքը ջրելու: Ձիանքը քաշում են շրի վրա, հուշտ
են ըլում, հետ են դառնում: Մեհտարներն ասին.— էս ի՞նչ բան ա,
ըստեղ մի գառ ա արածըմ, էս ինչից են հուշտ ըլում: Ըստի մի ջան
կա:

Մի մեհտար գնաց թամաշա արեց ջրի մեջը, տեհավ, որ մի
սիրուն ախչկա պատկերք կա, ասեց.— էս ի՞նչ բան ա, ա՛յ ջանըմ:

Թամաշա արեց վերև, տեհավ մի ախչիկ ծառի վրա նստած էր:

— է՛հ,— ասեց,— էս լավ էլավ, ուզենք մեր թաքավորի տղին:

Մի մեհտար գնաց թաքավորի տղին կանչեց՝ էկավ: էկավ տե-
հավ որ էնքան սիրուն ախչիկ ա, որ աշխարքի տակին չկա:

— է՛հ,— ասեց,— էս լավ էլավ, աստված էս ինձ համա՞ էր
դրգե:

Ասեց.— Ախչի՛, ծառից վեր արի:

Վեր բերեց ծառից ու գառի հետ տարսով իրա ամարաթը, յխտն
օր, օխտը քշեր հարսանիք արին, պսակվեցին:

Ախչիկը պատմեց իրա գլխի էկածը ու ասեց, որ էս գառը կա՛
իմ ախպերն ա, ճամփին ոչխարի ոտնատեղից ջուր խմեց, եղավ
գառ:

Օրերից մի օրը էտ ախչկա խորթ մերը իմացավ, որ էտ ախ-
չիկը գնացել ա, ըլել ա թաքավորի հարս: Վե կացավ իրանց գեղից

էկավ էտ թաքավորի քաղաքը, էտ քաղաքում մի տուն բռնեց. նստեց: Վեկացավ գնաց թաքավորի ամարաթը.—Վա՛յ,— ասեց,— իմ աշկերը քոռանա, լսել եմ որ ախպերդ գառ ա դառե, հա՛: Արի՛, արի էթանք մեր տունը, բալքի ես մի ճար անեմ:

Վեկացավ, տարավ իրանց տունը, ըտեղան վեկացավ տարավ ծովի ղրաղը իրա ախչկա հետ: Շորերը հանեցին, լեղացրեց էրկուսին էլ: Թաքավորի հարսին բրթեց, քցեց ծովը, դրա շորերը հաքցրեց իրա ախչկան, վեկալավ, բերեց թաքավորի ամարաթը:

Թաքավորի տղեն ասեց.— Ա՛յ կնիկ, էս խի՛ ես էսքան սեւացե: — Արևն ա սեւացրե, — ասեց, — ա՛յ մարդ:

էտ դառը օրական էթըմ էր ծովի ղրաղը կալնըմ էր ու բըռում էր: էտ խորթ ախչիկն ասեց.— էս գառը կիմացնի, յավաշ ես սուտ հիվանդ ըլեմ, էս գառը մորթել տամ, ուտեմ:

էտ կնիկը սուտ հավանդացավ, իշկան հեքիմներ բերին՝ շկարացան լավացնի, վերջը ասեց.— Որ իմ գառ ախպորը մորթեք, ես ուտեմ՝ կը լավանամ:

Թաքավորի տղեն ասեց.— Ա՛յ շանըմ, դու քու ախպորը աշխարքի հետ շէիր փոխում, էս ի՞նչ բան ա:

— էհ, — ասեց, — ի՞նչ անեմ, որ հիվանդ եմ, պտի մորթեք, ուտեմ՝ լավանամ:

Թող ըտոնք ըտի մնան, մենք խաբարը տանք թաքավորի հարսից: Որ խորթ մերը ըտրան քցեց շուրը, մի մեծ ձուկ կուլ տվեց: էտ ծովի ղրաղը մի հատ ժամ կար շինած, ձուկը որ գալիս էր էտ ժամի կշտից անցկենալու, ախչիկը ձկան փորիցը ձեն էր տալի. «Ժամհա՛ր, դու քու ժամերը կը տաս, քու արարիչ աստվածը կը սիրես, կէթաս թաքավորի տղին կասես՝ իմ դառնիկ ախպորը շմորթեն»:

Մի երկու օր, իրեք օր էտ ժամհարը էտ ձենը լսեց, ասեց. «Յավաշ ես գնամ թաքավորի տղին բերեմ ըստեղ, տենամ էս ի՞նչ ձեն ա»:

Վեկացավ գնաց թաքավորի տղին բերեց, էկավ թաքավորի տղեն ծովի ղրաղին կալնեց, ժամհարը ժամերը հենց որ տվեց, էտ ծովէ միջից մի ձեն եկավ. «Ժամհա՛ր, դու քու ժամը կը տաս, դու քու աստվածը սիրես, կեթաս թաքավորի տղին կասես՝ իմ ախպորը շմորթի»:

Չէնց որ թաքավորի տղեն էս ձենը լսեց.— Չա՛յ գիտի, կանչեք թոռչիք: Կանչեցին, բերեցին թոռչկանց, թոռերը քցեցին, էտ ձկանը բռնեցին: էտ ձկան փորը ճըղեցին, տեհան, որ մի հատ տկլոզ ախչիկ ա նստած, էրեխեն էլ խըտըտին:

Թաքավորի տղեն տեհավ, որ էս իրա կնիկն ա: Շորեր բերին հաքցրին, վեկալան տարան ամարաթը:

Ասեց.— Ա՛յ կնիկ, ասա տեսնեմ, էս ի՞նչ ա էկե քու գլուխը:

— Է՛,— ասեց,— Ա՛յ մարթ, ի՞նչ ասեմ, էն օրը որ էկավ իմ մերը տարավ ինձ ղոնախ, վեկալավ տարավ ծովի ղրաղը լողացնեբու, ընդեղ ինձ բրթեց, քցեց ինձ ծովը: Էն օրը ես ձկան իորին բերի էս տղեն:

— Ա՛յ գիտի,— ասեց,— կանչեք սրա մորը, գա:

Գնացին բերեցին էտ մորը ախշկա հետ:

Ասեց.— Բերեք ղաթրները, էրկսի մազերն էլ կապեցեք ամենքը մի ղաթրի պոչից, կըտանեք,— ասեց,— մեր քարքարոտ սարը, ըզար կքշեք, որ մենակ մազերը մնան պոչին կպած:

Տարան քշեցին սարը, մենակ մազերը բերին ամարաթը:

Թաքավորի տղեն նորից սկսեց հարսանիք անելը, օխտն օր, օխտն քշեր հարսանիք արեց, կերա՛ն, խմեցի՛ն: Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

Աստվածանից ընկավ իրեք հատ խնձոր. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ անկաճ անողին:

